իջանք Աւաջուղի (Գոգ—Հովիտ) բարձրութիւնից և մտանք Թայզաբարայ գեղեցիկ հովիտը։ Վերջինքն էր օրուայ*) երբ մենք ձիերը կանգնացրել էինք խանի դռանը։ Խանը ինձ ընդունեց իւր արևելեան ճաշակով զարդարուած դիւանխանումը։ Դիւանխանի մաքրութիւնը ինքնին ցոյց էր տալիս, որ նորա տէրը ցեղով տարբերվում էր թաթար խաներից։ Զախ անկիւնում ինքն էր նստած փափուկ գահոյկի վերայ, իսկ աջը ինձ շնորհեց։ Ընդունելութեան համար մի քանի քաղաքավարական խօսքերից զկնի, որոնք համեմած էին սուրճով, խանը սկսեց իւր աջ ծնօտի վերայ եղած վէրքի տանջանքներից գանգատվել, որ իւր աւաղակ ազգականները պատժելիս էր ստացել։ Այդ վերքը պատճառել էր մի հրացանի գնդակ, որ ջախջախել էր համարեայ ամբողջ ծնօտը։ Խանը թղթի մէջ փաթաթած մի կոյտ ոսկոռ ցոյց տուեց, որ երկու տարուայ ընթացքումը թափել էին նորա ծնօտից. նորա մէջն էին ատամները և մի մեծ կտոր, որ պարսիկ հեքիմը (բժիշկ) սղոցել էր կղակից, բայց

---

*) Վանայ բարբառի մէջ օրը բաժանված է մի քանի մասերի, որոնց անուններն են. "Աղօթարանի բացումը". արշալոյս։ "Ակրաստ". նախաճաշելու ժամանակ։ "Ճաշք", ճաշելու ժամանակ կէս օր։ "Վերջինք", վերջնալոյս. "Իրիկուն", երեկոյ։